ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

ԼՈՒՍԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

1917 թ. Թումանյանի հասարակական գործունեությունը հիմնականում կապված էր Հայկազյան ընկերության հետ՝ հայկական համալսարան և ակադեմիա ստեղծելու նախապատրաստական աշխատանքին, որի հիմքը դրվել էր 1912 թ. Պետերբուրգում՝ նրա բանտարկությունից ազատվելուց անմիջապես հետո:

1917 թ. ուշ աշնանը արդեն իրական հիմքեր կային Թումանյանի ծրագրերի կատարումն ավարտելու համար, առաջադրված էին ակադեմիայի 18 անդամների թեկնածուները, մնում էր պաշտոնական հաստատումը, որը պետք է տեղի ունենար ընկերության ժամանակավոր խորհրդի դեկտեմբերի 17-ի նիստում և ապա վերջնականապես հաստատվեր դեկտեմբերի 24-ի ընդհանուր, ընդլայնված ժողովում: Բայց այդ ժողովները չկայացան[1]:

1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջմանը հաջորդած Բրեստի դաշնադիրը, ապա Անդրկովկասյան կոմիսարիատի և թուրքական զորքերի միջև կնքված պայմանագիրը պարտագրեցին ռուսական զորքերի դուրսբերումը Արևմտյան Հայաստանի գրաված տարածաշրջաններից. հայ ժողովուրդը մենակ մնաց թուրքական բարբարոսությունների վայրենի վրեժխնդրության դեմ հանդիման. վատ էր վիճակը նաև Արևելյան Հայաստանում:

Թումանյանի ուշադրությունն այս անգամ էլ, ինչպես 1905–1906 թթ. ամբողջապես կենտրոնացավ իր ժողովրդի գոյատևման, ինքնապաշտպանության գործի կազմակերպման վրա: 1918 թ. ձմռանը և գարնանը իրար ետևից թուրքերին անցան Երզնկան, Էրզրումը, Կարսը, Սարիղամիշը, Վանը: Կրկին գլուխ բարձրացրին ազգամիջյան թշնամությունները, որոնք շուտով վերածվեցին հայ-թուրքական կռիվների: Մեծ վտանգ էր սպասվում հատկապես Հին Նախիջևանի և Բորչալուի թուրքերից: Թալան, կողոպուտ, կոտորածներ են սկսվում Անդրկովկասի բոլոր գավառներում. թուրքերն ու քրդերը կանգնեցնում, խորտակում էին գնացքները, թալանում ուղևորներին:

Ահա 1918 թ. այդ մղձավանջային օրերին Թիֆլիսում ստեղծվում են հայրենակցական միություններ, որոնց նպատակն էր գավառներում կազմակերպել ինքնապաշտպանություն, մյուս կողմից՝ նպաստել հաշտության ու խաղաղության գործին: Թումանյանի նախաձեռնությամբ շուտով որոշվում է ստեղծել բոլոր հայրենակցական միությունների համադործակցություն, այդ նպատակով մարտի 1-ին տեղի է ունենում միությունների

---

1 Հովհ. Թումանյան. Ուսումնասիրություններ և հրապարակումներ, գիրք 5, տե՛ս Լ. Կարապետյան. Թումանյանը և Հայկազյան ընկերությունը. Երևան, 1998, էջ 94–124:

միացյալ ժողով, որին մասնակցում են Ախալցխայի, Ախալքալաքի, Գանձակի, Հին Նախիջևանի, Ղարաբաղի և Զանգեզուրի, Ղազախ–Շամշադինի հայրենակցական միությունների ներկայացուցիչները: Ժողովը բաց է անում Թումանյանը, քիչ անց առաջադրվում ժողովի նախագահ, քարտուղար է ընտրվում Արամ Տեր-Գրիգորյանը: Իր ելույթում Թումանյանն առաջարկել է միացնել Թիֆլիսի բոլոր հայրենակցական միությունները, ստեղծել Հայոց հայրենակցական միությունների միություն (այսուհետև՝ ՀՀՄՄ), «որ ընդհանուր ուժերով և համերաշխ գործելով ավելի հաջող կերպով հնարավոր լինի դրական արդյունքներ ստանալ», կարդում ենք մարտի 1-ի ժողովի արձանագրության մեջ[2]: «Այդ ընդհանուր միության նպատակը պարզ է ինքնրստինքյան,– շարունակում է Թումանյանը,– ամեն կերպ ձգտել հաշտ ու խաղաղ ապրել բոլոր հարևանների հետ և այս պատմական ծանր ըոպեներին փրկել մեր ժողովրդի կյանքը»: Որոշվել է ընդունել Թումանյանի առաջարկը՝ յուրաքանչյուր Հայրենակցական միությունից ընդգրկել երկու ներկայացուցիչ[3]: Երեք օր հետո մարտի 4-ին, տեղի է ունենում ՀՀՄՄ կենտրոնական խորհրդի նիստը, որին մասնակցում էին հետևյալ հայրենակցությունների ներկայացուցիչները. Լոռուց՝ Թումանյանը, Նոր Բայազետից՝ Համաղասպ Համբարձումյանը և Երվանդ Ատովմյանը, Ախալքալաքից՝ Դերենիկ Դեմիրճյանը և Արամ Տեր-Գրիգորյանը, Ադուլիսից՝ Արիստակես Զաբդարյանը և այլ հայրենակցությունների ներկայացուցիչներ:

Թիֆլիսում եղած ժամանակ նիստերին միշտ նախագահել է Թումանյանը: Մարտի 4-ի այդ ժողովում քննարկված հարցը անմիջապես արդարացնում է Թումանյանի նպատակը և դա իրականացնելու դժվարությունները, որոնք սակայն նրան չվախեցրին: Շամշադինից եկած պատգամավորը հայտնում է, որ այնտեղ հավաքված են 2500 զինված դարաբաղցիներ ու գանձակեցիներ, որոնք ուզում են անցնել իրենց բնակավայրերը, բայց տեղական մահմեդականները արգելում են, պնդելով, որ անցնեն միայն զինաթափ լինելուց հետո: «Խումբը կարող է ուժով անցնել,– վստահ է ելույթ ունեցողը,– բայց սուր միջադեպից խուսափելով պատգամավոր է ուղարկվել՝ Հայոց ազգային խորհրդից և Անդրկովկասի կառավարությունից թույլտվություն ստանալու, մինչդեռ նրանք բավարարվել են անորոշ պատասխաններով, ուստի խնդրում են ՀՀՄՄ կենտրոնական խորհրդին աջակցություն ցույց տալ և ելք գտնել»: Հարցի լուծումը հանձնարարվել է Թումանյանին և Ա. Տեր-Գրիգորյանին:

Հաջորդ, մարտի 6-ի նիստում (որին մասնակցում էր նաև Ախալցխայի ներկայացուցիչ Ստեփան Մալխասյանցը) Թումանյանը հայտնել է, որ համաձայն նախորդ ժողովի որոշման դիմել է Ազգային խորհրդին՝ Շամշադինում հավաքված հայ զինվորների խումբը Գանձակ և Ղարաբաղ (Շուշի) տեղափոխելու համար թույլտվություն ստանալու, իսկ Ազգային խոր-

2 ՀՀՄՄ արձանագրությունները և այլ նյութեր պահպանվում են Հայաստանի պատմության կենտրոնական պետական արխիվում, լուսապատճենները՝ Թումանյանի թանգարանի փաստաթղթերի բաժնում (այսուհետև՝ ԹԹ, ՓԲ):

3 ԹԹ, ՓԲ, №379:

հուրդը դիմել է Անդրկովկասի կառավարությանը խնդրին լուծում տալու համար:

Մարտի 6-ի նիստը նշանավոր է նրանով, որ այդ օրը անցել են գործնական որոշումների. ընտրել ՀՀՄՄ նախագահ, երկու փոխնախագահ, մեկ քարտուղար և գանձապահ: Միության նախագահ է ընտրվել Թումանյանը, փոխնախագահներ բժ. Ա. Զարգարյանը և Ատ. Մալխասյանցը, քարտուղար Համ. Համբարձումյանը:

ՀՀՄՄ գործունեության առաջին օրից և հետո, այդ միության կենտրոնական, անփոխարինելի դեմքը Թումանյանն էր, նրա ոգին ու հույսը, ամենամեծ հեղինակությունը. յուրաքանչյուր դժվար լուծելի խնդիր առաջարկվում, հանձնարարվում էր նրան, մանավանդ եթե պետք է եղել բարձր ատյանների միջնորդությունը: Այնքան հմուտ ու կազմակերպված էր նա վարում գործը, որ բոլորը լուռ ու մունջ լսում էին ու անմիջապես տալիս իրենց համաձայնությունը: Մարտի 6-ի նիստում հաստատվում են այլ գործնական որոշումներ ևս. դրանցից կարևորը նյութական միջոցների հայթայթումն էր յուրաքանչյուր հայրենակցությունից ստացվող 5%-ի վճարումներով (միանվագ 200 ռ.):

Որպես ՀՀՄՄ նախագահ առաջին նիստը Թումանյանը վարում է մարտի 7-ին, երբ քննության է դրվում հայ-թուրքական հարաբերությունների խնդիրը, Թումանյանը հայտարարում է, որ այդ ուղղությամբ արդեն որոշ նախնական բանակցություններ սկսված են: Որոշվում է բանակցություններին տալ լայն ընդգրկում, գավառ ուղարկել գործիչներ, հանդես գալ մամուլում, հաշտության գաղափարը ժողովրդականացնել: Նախագահի առաջարկով որոշվում է կենտրոնական խորհրդի համար վարձել բնակարան, պարտավորեցնել փոխնախագահներից որևէ մեկին ամեն օր, որոշ ժամերի լինել գրասենյակում գործը անհապաղ առաջ տանելու նպատակով[4] (ընդսմին պետք է ասել, որ միությունը երբեք չունեցավ սեփական բնակարան, հավաքատեղի. ժողովները տեղի էին ունենում Կովկասի հայոց բարեգործական ընկերության դահլիճում, մեծահարուստ Արամյանցի տանը, կամ, պարզապես, Թումանյանի բնակարանում):

Միության նյութական վիճակը միշտ ծանր էր, հազիվ էին կարողանում դրամ հայթայթել: Բայց, չնայած այդ դժվարություններին, շուտով դառնում են հեղինակավոր կազմակերպություն, որին նպաստում էր Թումանյանի անդուլ գործունեությունը. մոռացած բանաստեղծի իր կոչումը նա ամբողջապես նվիրվել էր խաղաղության, իր ժողովրդի գոյատևման գործին:

Մարտի 9-ի նիստում նախագահը ներկայացնում է հայ-թուրքական հաշտության առաջիկա կարևոր քայլերը, որոնք մանրամասնորեն քննարկելով, խորհուրդը որոշում է. 1) հիմնել հաշտության ֆոնդ, այդ մասին կոչ հրապարակել մամուլում, 2) հաշտության ֆոնդի իրագործման խնդիրը թողնել առայժմ անորոշ, սպասելով խորհրդի նախաձեռնությամբ գումարվելիք հայ-թուրքական խառը ժողովին, որին և վերապահել հաշտության կոչի ու հրահանգի մշակումը, ֆոնդի գործադրումը:

---

4 ԹԹ, ՓԲ, № 382:

Հայ-թուրքական խառը ժողովի կազմակերպման գործը ևս հանձնարարվում է Թումանյանին. նա պետք է բանակցություններ սկսեր հարևան թուրքերի հետ:

Մարտի 13-ի և 15-ի նիստերում քննարկվել է ՀՀՄՄ ունեցած ռազմամթերքի գավառ տեղափոխելու դժվարությունների հարցը. որոշվել է, եթե հանդես գան արդելքներ՝ զենքը առայժմ կենտրոնացնել Երևանում:

Մտավորականներին գավառ գործուղելու Թումանյանի առաջարկի մասին ելույթ է ունեցել Դ. Դեմիրճյանը՝ կապելով այդ դպրոցների փակման հետ, մանավանդ որ ստեղծված պայմաններում դպրոցական գործը արդյունավետ չէր: Որոշվում է դիմել Ազգային խորհրդին, առաջարկելով փակել քաղաքային դպրոցները և հնարավորություն տալ ուսուցիչներին գնալ գավառ խաղաղության և ինքնապաշտպանության համար գործելու:

Ուշագրավ են մարտի 15-ի ժողովում Թումանյանի արած հետևյալ առաջարկները. 1) ապահովել Թիֆլիս–Բաքու և Թիֆլիս–Ջուլֆա երկաթուղիների անխափան երթը, 2) գավառ ուղարկել խաղաղարար պատգամավորներ այն պայմանով, որ նրանք տեղերում կազմակերպեն հաշտության մշտական մարմիններ՝ բաղկացած ժողովրդի հեղինակավոր ու պատասխանատու ներկայացուցիչներից, 3) խիստ քննություն նշանակել մինչև օրս տեղի ունեցած ավերածությունների ու կոտորածների մասին և ամեն միջոց գործադրել, որպեսզի թալանը ետ տրվի ըստ պատկանելության, տուժողը վարձատրվի, իսկ հանցավորներն ու խուովարարները խստորեն պատժվեն: Այդ միջոցառումների առաջարկությամբ ՀՀՄՄ նախագահը դիմում է Անդրկովկասի կոմիսարիատին և անձամբ նախագահին՝ Ե. Գեգեչկորուն՝ հանգամանորեն բացատրելով, թե ինչ հետևանքներ կարող են ունենալ «եղբայրասպան ընդհարումների սարսափները և չլսված արյունալի սպանդը», տեղեկացնում է մարտի 15-ի որոշումների մասին և առաջարկում միության բոլոր ուժերը դնել կոմիսարիատի տրամադրության տակ՝ եթե վերջինս ձեռնամուխ լինի վերոհիշյալ միջոցառումների գործադրմանը: Դիմումը գրված է ՀՀՄՄ կենտրոնական խորհրդի անունից՝ Թումանյանի և միության քարտուղար Համ. Համբարձումյանի ստորագրությամբ[5]:

Բանաստեղծի մեծ հեղինակությունը և նրա ղեկավարած գործի նկատմամբ կառավարության վստահությունը չէր կարող չունենալ սպասվելիք գրական արձագանք: Շուտով նա ստանում է պաշտոնական վկայական-հանձնարարական ռազմական մինիստրի և Վրաստանի կառավարության նախագահի սաորագրությամբ՝ Ղազախ–Բորչալուի ժողովրդի խաղաղության գործը ղեկավարելու մասին և Թիֆլիսի բաժանմունքից կես հարյուրակ զինվոր և մեկ սպա՝ ինքնապաշտպանության խմբերի հետ որոշակի գործողություններ ծավալելու համար[6]:

Ինչպես տեսնում ենք, ՀՀՄՄ գործունեությունը արդեն մոտենում էր կառավարական մակարդակի և պատահական չէ, որ միության մարտի 22-ի ընդհանուր ժողովում Թումանյանը հայանում է Հայոց ազգային խորհրդի՝ (որի նախագահը Ավ. Ահարոնյանն էր) միության նկատմամբ ունեցած

---

5 ԹԹ, ՓԲ, № 386:

6 Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու (այնուհետև ԵԼԺ, հատորը և էջը). հ. 10, 1999, էջ 284, 640–641:

վերաբերմունքի մասին՝ այն է՝ թե որքա՞ն «օրինավոր և հնարավոր է» միության դոյությունը Ազգային խորհրդի հանդեպ: Ժողովը որոշեց, որ ՀՀՄՄ իր ծրագրով և գործունեությամբ, ո՛չ փաստորեն, ո՛չ էլ իրավաբանորեն չի խանգարում Ազգային խորհրդի իրավասությանը և մտադիր չէ «մրցում ստեղծել իր և Ազգային խորհրդի միջև»: Դեռևս 1917 թ. դեկտեմբերին Ազգային խորհուրդը իրեն հայտարարել էր գերագույն մարմին բոլոր հայերի համար, ուստի հասկանալի է, որ նա չէր հանդուրժելու միության բարձր մակարդակի գործունեությունը: Նույն անհանդուրժողականությունը նա դրսևորել էր 1917 թ. դեկտեմբերին Թումանյանի նկատմամբ, թեպետ նրա նախաձեռնությամբ հավաքված մտավորականների ժողովը կոչ էր հրապարակել Ազգային խորհրդի հետ համագործակցելու. «գործել ռուսական դեմոկրատիայի և կովկասյան բոլոր ազգերի ինտելիգենցիայի հետ համերաշխ...»[7]:

Անկախ Ազգային խորհրդի բռնած դիրքի՝ ՀՀՄՄ նախագահը իր և զինակիցների ծրագրերն ու գաղափարները արագորեն վեր էր ածում որոշակի գործերի: Պահպանվել է մի երկտող-գրություն, գրված մարտի 23-ին, ուղղված Ստ. Մալխասյանցին (անթվակիր է, ժամանակը որոշվում է հասցեատիրոջ նամակով): «Սիրելի պ. Ստեփան,– գրում է Թումանյանը,– նոր վճռվեց: Կիրակի օրն ենք գնում: Գնում եմ նահանգական կոմիսարի հետ: Ես կարծում եմ՝ տուժած հայերը կարող են և պետք է գան ու հայտնեն իրենց կորուստն ու պահանջը»[8]: Այնքան էլ շատ բան չի կարելի կռահել այս երկտողից, եթե չլիներ Մալխասյանցի նույն օրը գրած նամակը, որի պատասխանը Թումանյանի հիշյալ երկտողն է: Մալխասյանցը հետաքրքրվում էր որպես ՀՀՄՄ փոխնախագահ՝ թե ե՞րբ է Թումանյանը ուղևորվելու Լոռի՝ խաղաղություն հաստատելու միսիայով, նրա հետ գնալո՞ւ է թուրք հաշտարար թալանված գույքը հայերին վերադարձնելու համար և թե կարո՞ղ են երկու հաշտարարների հետ գնալ նաև Նորավանի այն հայերը, որոնց գույքը կողոպտել են թուրքերը, ստիպելով նրանց գյուղից հեռանալ: «Խեղճերը,– գրում է Մալխասյանցը,– փետրվարի 13-ից մինչև այսօր արդարություն և իրավունք են հայցում: Վարի, երկրագործական աշխատանքի ժամանակն անցնում է, թուրքերը ցանում են մեր վարած դոստանները»[9]: Ահա թե ինչու Թումանյանը պատասխանում է. «... տուժած հայերը կարող են և պետք է գան ու հայտնեն իրենց կորուստն ու պահանջը»: Ինչպես ասվեց, նա Մալխասյանցին հայտնում է նաև, որ մեկնելու է կիրակի, այսինքն՝ մարտի 25-ին:

Նախագահի Լոռի մեկնելուց հետո գործերը պետք է տնօրինեին փոխնախագահները՝ բժ. Ար. Զարգարյանը և Ստ. Մալխասյանցը: Մինչ այդ, Լոռուց և Բորչալուից ահազանգեր էին հասնում Թիֆլիս տեղական թուրքերի բարբարոսությունների մասին. կողոպտում էին ոչ միայն խեղճ, անօգնական գյուղացիներին, այլև հարուստներին. քանդում էին նրանց

---

7 Լ. Կարապետյան. Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը (դրվագներ). Երևան, 1992, էջ 200–201:

8 ԵԼԺ, 10, 286, 642:

9 Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ). Թֆ, ց. 2, էջ 504:

գործարանները, ավերում տները: «Լոռուց օգնություն են խնդրում»,– հաղորդում էր «Հորիզոն» օրաթերթը մարտի 21-ին:

Լոռի, Ղազախ և Բորչալու մեկնելու հրավերը Թումանյանը ստացել էր այդ տարածաշրջանի բնակչությունից, ապա լիազորվել, ինչպես ասացինք, անդրկովկասյան կառավարությունից, իր տրամադրության տակ ունենալով նաև զորամաս[10]:

Բազմանդամ ընտանիքի մի մասի հետ ապաստանելով Լոռում, Թումանյանը անդադար բանակցությունների մեջ էր հայ և այլազգի գործիչների հետ. մեկ Դսեղում էր, մեկ Ղարաքիլիսայում, մեկ շտապ մեկնում էր Թիֆլիս, ապա վերադառնում կռիվների վայրերը: Դրությունը կրկնակի ոգրերդական դարձավ տաճկական զորքերի հարձակումներից հետո, երբ գրավվեցին Ալեքսանդրապոլը և Ղարաքիլիսան: Տակավին փետրվարին (ասել է թե՝ նախքան ՀՀՄՄ ստեղծումը) Թումանյանը Հայոց ազգային խորհրդի հանձնարարությամբ ստանձնել էր նաև Լոռու, Փամբակի, Ղազախի, Շամշադինի և Բորչալուի ընդհանուր լիազորի պարտականությունը. կարելի է պատկերացնել, թե ինչ դերլարված գործունեություն էր ծավալել նա...

* * *

Թիֆլիսում ՀՀՄՄ գործունեությունը շարունակվում էր ոչ նույն թափով. զգացվում էր նախագահի բացակայությունը: Նիստերից մեկում կրկին քննարկվել է Ազգային խորհրդի ոչ որոշակի շահագրգռվածությունը հաշտության հաստատման նկատմամբ: Հնարավոր է, անշուշտ, որ գրան խանգարում էր ծանր կացությունը Աարգարապատում և Ղարաքիլիսայում... Դեմիրճյանը և ուրիշներ իրենց ելույթներում առաջարկում են զիմել Ազգային խորհրդին, խնդրել նրա աջակցությունը խաղաղության գործին, որ նա բարձրացնի իր հեզինակավոր ձայնը գավառներում տիրող բարբարոսությունների դեմ, իսկ միության անդամներին հանձնարարվում է մամուլում հանդես գալ խաղաղության ու հաշտության կոչով, որի խմբագրությունը առաջարկվում է Դ. Դեմիրճյանին, Մ. Ավետիսյանին, Ղարաբեկյանին:

Դեռ նախքան Թիֆլիսից հեռանալը, Թումանյանը գրել էր «Հանդցրեք հրդեհը» հոդվածը հայերեն և ռուսերեն հրապարակելու համար[11]: Այդ հոդվածով նա անխնա դատապարտում է ազգամիջյան ընդհարումները հրահրողներին, կոչ անում միացյալ ուժերով հանդցնել հրդեհը: ՀՀՄՄ մի կոչ տպագրվում է մայիսի 25-ին՝ «Հայ ժողովրդին» վերնագրով: Այդ այն ժամանակ էր, երբ տաճկական զորքերը սպառնում էին ոչ միայն Ղարաքիլիսային, այլև՝ Թիֆլիսին: Կոչը գրված էր խուճապի և դասալքության դեմ, համոզում էր չընկճվել, պրոպագանդում էր տարբեր ազգերի համագործակցությունը՝ անհրաժեշտության դեպքում տաճկական զորքերին դիմադրավելու համար[12]:

---

10 «Հորիզոն», 1918, № 33:

11 «Մշակ», 1918, № 66, "Кавказское слово", № 70:

12 «Հորիզոն», 1918, № 98:

Մինչև Լոռի մեկնելը, ՀՀՄՄ մարտի 22-ի ժողովում, քննարկվել է Թիֆլիսում ստեղծվող հայ-թուրքական սոցիալիստական բլոկի առաջարկը՝ իրենց բյուրոյում հայ ներկայացուցիչ ունենալու անհրաժեշտության մասին պայմանով, որ այդ ներկայացուցիչը լինի սոցիալիստ՝ սոցիալ-դեմոկրատական, սոցիալ-հեղափոխական կամ «Հումմետ» կուսակցության անդամ: Առաջարկի քննարկումը ընթացել է վիճաբանություններով, որից հետո սոցիալիստական բլոկի հայ ներկայացուցիչ է ընտրվել անկուսակցական Թումանյանը, իսկ նրա բացակայության ժամանակ փոխարինելու էր Արամ Տեր-Գրիգորյանը: Սոցիալիստական բլոկի մարտի 23-ի ժողովում նախագահ է ընտրվել Գ. Ղարաջյանը (Արկոմեդ), իսկ Թումանյանը՝ բյուրոյի անդամ և նախագահի տեղակալ[13]*:*

* * *

Թումանյանը Լոռուց վերադարձավ հունիսի 22-ին կամ 23-ին, որից հետո ՀՀՄՄ առաջին նիստը տեղի ունեցավ հուլիսի 11-ին, դարձյալ նրա նախագահությամբ:

Թումանյանի վերադարձը և ներկայությունը հուլիսի 11-ի և հետագա ժողովներում նոր աշխուժություն մտցրեց միության կենտրոնական խորհրդի աշխատանքում: Օրակարգ էին մտնում նախկինում առաջ քաշված հարցեր ու խնդիրներ, որոնք չէին լուծվել նախագահի բացակայության միջոցին: Որոշվեց հրապարակել նոր կոչ՝ ուղղված աշխարհի բոլոր ժողովուրդներին:

Շարունակվում էին հաճախակի տեղի ունեցող նիստերը, քննարկում, որոշումներ էին կայացնում օրվա հրատապ հարցերի գաղթականների, նրանց տեղափոխելու, տեղավորելու, միության մեջ գործադիր մարմին ընտրելու մասին: Եթե նախկին ժողովներում յուրաքանչյուր հայրենակցությունից մասնակցում էին երկու ներկայացուցիչ, հուլիսի 19-ից նրանց թիվը դարձավ երեք: Ընտրվեց կենտրոնական խորհուրդ, որը պետք է հանդիսանար ՀՀՄՄ բարձրագույն մարմինը: Հուլիսի 22-ին գաղտնի քվեարկությամբ ընտրվում է գործադիր մարմին, որի մեջ մտնում են Թումանյանը, Խ. Միանսարյանը, Մարգար Ավետիսյանը, Ա. Տեր-Գրիգորյանը, Մ. Դարբինյանը, նրանց փոխարինողներ ընտրվեցին Ստ. Զորյանը և Մ. Պետրոսյանը: Ընտրվում է նաև նոր նախագահություն՝ նախագահ՝ Թումանյան, փոխնախագահներ՝ Հ. Արղության, Մ. Ավետիսյան, գանձապահ՝ Միանսարյան: Նախագահը առաջարկում է գործի վերածել նախորդ ժողովում կայացրած որոշումը՝ նոր կոչի հրապարակումը, որը պետք է իրականացներ գործադիր կոմիտեն: "Народам и государствам всего мира" *վերնագրով կոչը հրապարակվում է օգոստոսի 22-ին* "Кавказское слово" *օրաթերթում (№ 76) Թումանյանի և Համ. Համբարձումյանի ստորագրությամբ: Կոչը ուղղված էր աշխարհի ժողովուրդներին, նրանց պառլամենտներին, ակադեմիաներին, համալսարաններին, դիտական ընկե-*

---

13 *Թումանյանի մասնակցությունը այդ բլոկում այլ կերպ է հիշում Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանի պրոֆեսոր Ազիզ Շարիֆը, որը պատմում է բլոկի նիստերում Թումանյանի հետ ունեցած հանդիպումների, նրանից ստացած մեծ տպավորության մասին (տե՛ս Թումանյանը ժամանակակիցների հուշերում (այսուհետև՝ ԹԺՀ)). Երևան, 1969, էջ 735–737:*

բությունններին: Նկարագրելով հայ ժողովրդի ծանր, անելանելի վիճակը, խնդրվում էր բարոյական և նյութական օգնություն: Կոչերի չարագրանքը բոլոր երկրների համար նույնն էր, բացառություն են կազմել Թուրքիան, Պարսկաստանը, Վրաստանը և Ադրբեջանը: Կոչերը Թիֆլիսում գտնվող գերմանական և ավստրիական ներկայացուցիչներին Թումանյանն ինքն է անձամբ հանձնել և արժանացել ջերմ վերաբերմունքի. և միայն այդքան. հայ ժողովրդի կյանքում ոչինչ չփոխվեց[14]:

Շարունակվում էին ՀՀՄՄ ժողովներում ահազանգեր գալ փախստականների անելանելի վիճակի մասին. օրեցօր աճում էր սովահարների թիվը, օրը 50-ից ավելի մարդ էր մեռնում: Տակավին օգոստոսի 8-ի ժողովում Բակուրիանիի ներկայացուցիչները գաղթականության վրկությունը տեսնում էին հայրենիք վերադառնալու և այդ տարվա հունձը վերցնելու մեջ: Խոսվում էր արդեն սկսված համաճարակի մասին, որ կարող էր աղեսալի հետևանքներ ունենալ Բակուրիանիում հավաքված 20000, Ծալկայի 40000 փախստականների համար: Միության գործադիր մարմնին հանձնարարվում է գիմում ներկայացնել Թիֆլիսի գերմանական, ավստրիական, բուլղարական և տաճկական ներկայացուցիչներին, ինչպես և բանավոր միջնորդություններով արագացնել փախստականների հայրենիք վերադառնալու հարցի լուծումը: Ընդսմին պետք է ավելացնել, որ մեկ ամիս առաջ Թումանյանի մասնակցությամբ Բաթում մեկնած պատվիրակության պահանջներից մեկը գաղթականության իրենց ընակավայրերը վերադառնալու թույլտվություն ստանալն էր, որը սակայն մերժվել էր հետևյալ պատճառաբանությամբ. «...Դա առայժմ անկարելի է, որովհետև Թուրքերի և հայերի սուր հարաբերությունները Թուրքիային անցած շրջաններում կարող են էքսցեսներ առաջ բերել»[15]:

* * *

1918 թ. հուլիսին, Հայոց Ազգային խորհրդի Թիֆլիսից Երևան տեղափոխվելուց և անկախ Հայաստանի վարչակազմ ստեղծելուց հետո, օգոստոսին Թիֆլիսում կազմակերպվում է Վիրահայ Ազգային խորհուրդ. Հայրենակցությունների միությունը քննարկման է դնում նորաստեղծ խորհրդին մասնակցելու կամ չմասնակցելու հարցը: Օգոստոսի 20-ի նիստում այդ մասին զեկուցել է Հ. Համբարձումյանը, սուր քննադատության ենթարկելով պաշտոնապես դեռ չկայացած Վիրահայ Ազգային խորհուրդը, հատկապես նրա կուսակցական հիմունքների անհամապատասխանությունը ժողովրդական լայն զանգվածների պահանջներին և առաջարկել ոչ միայն չմասնակցել այդ խորհրդին, այլև բողոքել նրա «անկանոնության և ապօրինության դեմ»: Այդ քննարկմանը մասնակցել է Թումանյանը և հիմնականում համաձայնել Համբարձումյանի հետ, բայց երբ քվեարկել են, այնուամենայնիվ, անցել է Վիրահայ Ազգային խորհրդին հայրենակցությունների մասնակցելու անհրաժեշտությունը ուժ ներկայացուցիչներով: Կողմնակիցները նոր Ազգային խորհրդի թերությունները մասամբ

---

14 *Թումանյանի և գերմանական պատգամավորության գլխավոր գեներալ ֆոն Կրեսսի հանգիպման և այլ մանրամասներ տե՛ս Լ. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 218–221:*

15 *«Մշակ», 1918, № 31:*

բացատրել են օբյեկտիվ պատճառներով: Նրանք հույս ունեին այդ կազմակերպության միջոցով լուծել գաղթականությանն օգնելու, նրանց տեղավորելու և ազգային այլ խնդիրներ կապված այդ ծանր օրերի պահանջներին: Բայց սպասելիքները չեն իրականանում. անուշադրության են մատնվում Թումանյանի ստորագրությամբ պաշտոնական գրությունները գաղթականական խորհրդակցություն գումարելու պահանջով[16]:

Պետք է ենթադրել, որ Վիրահայ Ազգային խորհուրդը հանձին Հայրենակցական միությունների գործադիր մարմնի, և անձամբ Թումանյանի, տեսնում էր մի կազմակերպություն, որն իր նախագահի հետ հսկողությունն է սահմանում իրենց ծրագրերի և սկզբունքների նկատմամբ: Նման վերաբերմունքի առիթ կարող էր հանդիսանալ Ազգային խորհրդին ուղղած 1918-ի սեպտեմբերի 13-ի Թումանյանի ստորագրությամբ պաշտոնական գրությունը, որտեղ բավական կտրուկ շարադրված էր օգոստոսի նիստում ՀՀՄՄ Վիրահայ Ազգային խորհրդին մասնակցելու հարցը՝ պատճառաբանված հետևյալ կերպ. «Նկատելով, որ Ազգային խորհուրդը ըստ իր կազմի հիմնված լինելով կուսակցական սկզբունքի վերա միակողմանի է և, որպես այդպիսին, չի համապատասխանում գավառների ներկայացուցչության սկզբունքին և այդ պակասը լրացնելու նպատակով Ազգային խորհրդի մեջ ներկայացուցիչներ պետք է ունենա Հայրենակցությունների միությունը, որը բաղկացած է գավառների ներկայացուցիչներից, որոշեց մասնակցել Վրաստանի Հայոց Ազգային խորհրդին ուղարկելով միությունների միության կողմից ութ ներկայացուցիչ»:

Վերևում տեսանք Հայոց Ազգային խորհրդի անհանդուրժողականությունը 1918-ի գարնանը նոր կազմակերպված ՀՀՄՄ նկատմամբ: Այժմ նույնը կրկնվում էր: Արդեն տեղյակ նրա գործունեությանն ու պահանջկոտությանը, Վերահայ Ազգային խորհուրդը կարող էր Թումանյանի ղեկավարությամբ գործող կազմակերպության մեջ մի կողմից իր նկատմամբ տեսնել անվստահություն, մյուս կողմից՝ ոտնձգություն նոր ստեղծված խորհրդի հանդեպ: Դա պատահական չէ: Թումանյանի գործունեությունը դուրս էր գալիս սովորական հասարակական կազմակերպության սահմաններից: Բերենք մի քանի օրինակ: Դեռ նոր էր ստեղծվել միությունը, երբ 1918-ի մարտի 8-ի դրությամբ Թումանյանը պաշտոնապես դիմել էր Թիֆլիսի Ազգային խորհրդին, խնդրելով միջնորդել լիկվիդացիայի ենթարկվող հիմնարկություններից մեկ կամ երկու ավտոմեքենա հատկացնելու Նոր Բայազետի քաղաքային ինքնավարությանը կանոնավորելու Նոր Բայազետի և Դիլիջանի միջև եղած երթևեկությունը, որը շատ անհրաժեշտ էր տեղի ազգաբնակչությանը, ինչպես և ինքնապաշտպանության ու պարենավորման գործը կազմակերպելու համար:

Թումանյանի և Համբարձումյանի ստորագրությամբ գրություն է ուղարկվել Վիրահայ Ազգային խորհրդին, բյուրոյի գաղթականության հարցերով զբաղվող բաժնին՝ Ղազախի հայ բնակչության հացի և սերմացուի կարիքների, գաղթականության ծանր վիճակի, սովամահության դեպքերի

16 ԹԹ, ՓԲ, №476:

մասին: Անհրաժեշտ է համարվել շուտափույթ օգնություն և գաղթականների կազմակերպված վերադարձը դեպի հայրենիք:

1918 թ. հոկտեմբերից ՀՀՄՄ նիստերում արգեն կարևորվում էր հայ ժողովրդի կրած վնասների մասին միջազգային ատյաններին հուշագիր ներկայացնելու անհրաժեշտությունը: Հոկտեմբերի 3-ին Թումանյանը առաջարկում է քննության ենթարկել Շուլավերի շրջանում տեղի ունեցած հայ-թուրքական տարաձայնությունների, հայերից խլված գույքի հարցը: Որոշվում է՝ Շուլավեր ուղարկել հատուկ պատգամավորություն՝ տեղում խնդիրը քննելու և լուծելու համար: Այդ առիթով առաջարկվում է քննություն սկսել հայկական բոլոր գավառներում հայերի կրած վնասների մասին: Կամաց-կամաց մոտենում էր «Համաշխարհային պատերազմի ժամանակ հայ ժողովրդի կրած վնասները որոշող քննիչ հանձնաժողով» (այսուհետև՝ Քննիչ բյուրո կամ հանձնաժողով) ստեղծելու և միջազգային կոնգրեսին հուշագիր ներկայացնելու անհրաժեշտությունը[17]:

Հոկտեմբերի 10-ի նիստում Թումանյանը զեկուցել է ՀՀՄՄ Կենտրոնական խորհրդի և գրողների միության վարչության համատեղ ջանքերով հաջողեցրած Հայաստանի վերաշինության միջոցներից դումար ստանալու մասին, որը պետք է վճարեին մեծահարուստները՝ Հ. Մանթաշյանը, Համբ. Մելիքյանը, Ավան-Յուզբաշյանը: Հոկտեմբերի 11-ին Թումանյանի և Համբարձումյանի ստորագրությամբ գրություն է ուղարկվում փախստականների և գաղթականության արգեն բավական ձգձգված խնդիրները լուծելու՝ Վիրահայ Ազգային խորհրդի և Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության համատեղ խորհրդակցության մասին, համարելով այդ «հույժ կարևոր և անհետաձգելի խնդիր»[18]: Նոյեմբերի 2-ի նիստում հուշագրի իրականացումը որոշվում է հանձնարարել Թումանյանին և Արշակ Ջամալյանին, իսկ գործի ֆինանսական կողմը ապահովելու համար ստեղծել հանձնաժողով ականավոր ֆինանսիստներից[19]:

1918 թ. դեկտեմբերի 3-ից հայտնի էր Թումանյանի որդու՝ Արտավազդի սպանությունը Վանի վերջին մարտի գաղթի ժամանակ...[20] Նույնիսկ որդու ողբերգական մահվան լուրը, որ այնքան խոր ազդեց բանաստեղծի վրա, չխանգարեց նրա մասնակցությանը ՀՀՄՄ գործունեությանը: Դեկտեմբերի 4-ին և 5-ին Թումանյանը արգեն իր բնակարանում ղեկավարում էր նիստերը, առաջարկելով խիստ կարևոր առօրեական հարցեր՝ սկսած մեմորանդումից, գավառներում կյանքի ապահովության, որբանոցներ բացելու համար դումարներ հայթայթելուց և այլն:

ՀՀՄՄ ընդհանուր ժողովում հաստատվում է քննիչ հանձնաժողովի կազմը. նախագահ է ընտրվում դարձյալ Թումանյանը, քարտուղար՝ Կորյուն Ղազազյանը: Պարտականությունները և պաշտոնները բաժանվել են հետևյալ կերպ: Լեոն Քննիչ բյուրոյի (կամ հանձնաժողովի) պատմահասարակական բաժնի վարիչն էր, շարադրելու էր «Հայկական հարցի» պատմությունը, Քրիստ. Վերմիշյանը վարելու էր տնտեսական բաժինը, որը

17 ԹԹ, ՓԲ, № 376:
18 Նույն տեղում, № 478:
19 Նույն տեղում, № 405:
20 ԵԼԺ, 10, 651:

կոչված էր հաշվելու պատերազմի ընթացքում հայ ժողովրդի կրած վնասները: Շուտով նրան փոխարինում է Աշ. Աթանասյանը: Երրորդ բաժինը քրեական քննչական, պարտավոր էր բացահայտել ու գրանցել տեղի ունեցած բոլոր սպանությունների և ամեն տեսակի գազանաբարո արարքների փաստերը թուրքերի հարձակումների ժամանակ. բաժինը վարելու էր Տիգրան Հովհաննիսյանը: Չորրորդը զինվորապատմական, շարադրելու էր հայկական ռազմական ուժերի, հայ ժողովրդի մասնակցությունը պատերազմին և այդ մասնակցության նշանակությունը. բաժնի վարիչն էր գեներալ Կուլեբյակինը[21]:

Քննիչ բյուրոյի գործունեությունը չէր ընթանում որպես առանձին կազմակերպության պարտականության իրագործում, քանի որ ինչպես ՀՀՄՄ, այնպես էլ հանձնաժողովի նախագահը Թումանյանն էր և ամբողջ պատասխանատվությունը նրա վրա էր, չնայած կենտրոնական գործադիր կոմիտեի անդամների գործուն մասնակցության (Հ. Համբարձումյան, Մ. Ավետիսյան, Ա. Տեր-Գրիգորյան, Հ. Արղության, Ստ. Մալխասյանց և ուրիշներ): 1919 թ. հունվարի 19-ին տպագրվում է Թումանյանի ստորագրությամբ հետևյալ «Դիմումը». «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասները ցուցակագրող Քննիչ հանձնաժողովը դիմում է այն բոլոր անձնավորություններին, որոնք նյութեր ունեն հավաքած տաճիկների գազանությունների, մեր ժողովրդի կրած վնասների մասին, Տաճկաստանում թե Կովկասում, դնել այդ նյութերը հանձնաժողովի տրամադրության տակ: Հանձնաժողովը սիրով և շնորհակալությամբ կընդունի այդ նյութերը, լինեն գրանք մշակված աշխատություններ, հիշատակարաններ, ականատեսների վկայություններ, վիճակագրական տեղեկություններ և թե լուսանկարներ: Մշակված տեղեկությունների և կարևոր նյութերի համար հանձնաժողովը վճարում է վարձատրությունը»[22]:

Թումանյանի ինքնագրով պահպանվել է մի անթվակիր փաստաթուղթ[23] (հավանաբար գրված 1919-ի սկզբներին), որտեղ գրառումներ, ծրագրային նշումներ կան ՀՀՄՄ գործունեության սկզբունքների, նպատակների մասին, ամփոփ տեղեկություններ միության և Քննիչ բյուրոյի վերաբերյալ: Այն բաղկացած է երկու հիմնական կետից և չորս ենթակետերից. 1) Հայրենակցությունների միությունը շարունակում և վերջացնում է հայ ժողովրդի կրած նյութական և ֆիզիկական կորուստների ու տառապանքների ցուցակագրումը, պարբերաբար հրատարակելով իր աշխատանքի արդյունքները: 2) Հայ ժողովրդի կրած ամեն տեսակի վնասների մասին ստուգված տեղեկություններ հավաքելու նպատակով հանձնաժողովը,

---

21 ԹԹ, ՓԲ, №407: Գեն. Կուլեբյակինի գործունեության մանրամասները տե՛ս А н. З а к а р я н. Поэт—генерал Александр Кулебякин и Армения.— «Պատմաբանասիրական հանդես», 2001, №2, էջ 99–129: Ա. Հ. Զ ա ք ա ր յ ա ն. Գեներալ Ալեքսանդր Կուլեբյակինի մասնակցությունը Համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի աշխատանքներին.— «Հայկական բանակ», 2002, №1–2, էջ 155–161: Քննիչ հանձնաժողովի գործունեության մասին տե՛ս նաև հանդեսի սույն համարում տպագրված Ան. Զաքարյանի «Նորահայտ փաստաթղթեր Հովհ. Թումանյանի գլխավորած «Համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի գործունեության մասին» հրապարակումը (էջ 271–304):

22 «Մշակ», 1919, №14:

23 ԹԹ ՓԲ, №368:

նախօրոք մշակված ծրագրով, սկսում է ցուցակագրել, ղեկավարվելով հետևյալ հիմնական սկզբունքով.

ա) Հայրենակցությունների միությունը, ինչպես միակ համահայկական հասարակական կազմակերպություն, այդ գործը կատարում է բոլոր հայերի վերաբերմամբ, անկախ այն հարցից, թե ինչ պետության սահմաններում են ապրում:

բ) Հավաքվող տեղեկություններին իրավական ուժ տալու նպատակով վնասների ցուցակագրման գործը այս կամ այն կերպ ճանաչել տալ դաշնակիցների կողմից:

գ) Վնասների ցուցակագրումը թե՛ քաղաքացիների և թե՛ գյուղացիների նկատմամբ կատարել անհատականացման սկզբունքով:

դ) Այս գործի համար անհրաժեշտ նյութական միջոցներ ստանալ հայկական կառավարությունից և բոլոր այն կազմակերպություններից, որոնք ընդունում են այդ գործի կարևորությունը:

Շուտով սկսվում է մի նոր ողբերգություն, որը խանգարում է Քննիչ բյուրոյի գործը անմիջապես ընթացքի մեջ դնելուն:

1918 թ. ամառվանից սկսված սահմանային վեճերը Հայաստանի և Վրաստանի զորքերի միջև ի վերջո դեկտեմբերին վերածվում են հայ-վրացական պատերազմի, որը տևում է 20 օր և ավարտվում է դեկտեմբերի 31-ին:

Թումանյանը հայրենակցությունների միության հետ միասին նվիրվում է կռիվները խաղաղությամբ ավարտելու գործին: Դեկտեմբերի 18-ին նրա բնակարանում տեղի ունեցած 15 հայրենակցությունների մասնակցությամբ կենտրոնական խորհուրդը որոշում է պաշտոնական դրություն ուղարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանը, որի վարչապետը այդ ժամանակ Հ. Քաջազնունին էր: Բոլոր ելույթ ունեցողները միահամուռ դեմ են արտահայտվել պատերազմին, որոշել դրավոր բանաձևի միջոցով բողոքել կատարվող արյունահեղության դեմ, պահանջել դադարեցնել թշնամական գործողությունները, ընդհարման պատճառները վերացնելու համար գումարել հայ-վրացական կոնֆերանս, ամեն կերպ աջակցել կռվող կողմերի կառավարություններին, որոշումը հայտնել աղգային-հասարակական հիմնարկություններին, տարածել երկու ժողովուրդների ամենալայն խավերի մեջ: Թումանյանը գրավոր և բանավոր դիմում է նաև Վրաստանի արտաքին գործերի նախարար Ե. Գեգեչկորուն, հանրապետության նախագահ Ն. Ժորդանիային, վրաց և ռուս մշակութային գործիչների[24]:

Դիմումներում և հրապարակված նյութերում Թումանյանը որոշակի չէր մեղադրում Հայաստանի կամ Վրաստանի կառավարություններին, կամ մեղադրում էր երկուսին էլ. մեղավորին ու արդարին փնտրելու ժամանակը չէր, հարկավոր էր շտապ վերջ տալ արյունահեղությանը: Բայց ահա Անդրանիկին գրած 1918-ի դեկտեմբերի 14-ի նամակում նա մեղադրում է վրաց կառավարությանը, նրանց զորքերն էին հրահրել պատերազմը՝ օգտվելով Հայաստանի քաղաքական և տնտեսական ճգնաժամային

24 ԵԼԺ, 10, 300–301, տե՛ս նաև "Кавказское слово", 1918, № 70, «Ժողովրդի ձայն», 1918, № 85, 86, «Մշակ», 1918, № 261, ԵԼԺ 7, 367–368, 370–377:

վիճակից, կամեցել էին մի պատառ խլել սքանչելի Լոռու հողերից: «Լոռեցիները,– գրում է Թումանյանը հիշյալ նամակում,– վրացի զորքերի լրբությունից կատաղած հարձակվել են նրանց վրա, և առաջ է եկել կանոնավոր պատերազմ: Վրացիք նահանջել են մինչև Բորչալու, տալով բավական սպանվածներ և գերիներ: Զբաղված ենք էգ կռիվը վերջացնելու գործով»[25]:

Հետագա օրերին կռիվները ընթանում էին հօգուտ վրացիների, բայց շնորհիվ Թումանյանի վարած բանակցությունների 1919 թ. Նոր տարին սկսվում է խաղաղությամբ:

Պատերազմի հենց սկզբից Վրաստանի կառավարությունը հայտարարել էր, թե ամեն հայ, որը աջակցություն ցույց կտա Հայաստանի կառավարությանը «կհամարվի պետական գավաճան և գույքը կգրավվի հարքունիս»: Օգտվելով դրանից, վրաց միլիցիան խուզարկել է Քննիչ բյուրոյի գրասենյակը և փակել այն դադարեցնելով աշխատանքը[26]: Գործը վերսկսելուն վերստին օգնել է Թումանյանի 1919 թ. հունվարի 6-ի դիմումը Ն. Ժորդանիային[27], որից հետո Քննիչ բյուրոյի գործունեությունը շարունակվել է կառավարության թույլտվությամբ:

Թվում էր, թե արդեն կարելի է ընթացքի մեջ դնել Քննիչ բյուրոյի գործը, մանավանդ որ նախօրոք որոշվել է աշխատանքն այդ ուղղությամբ ավարտել 1919-ի մարտին: Այս անգամ խանգարում է ֆինանսների պակասը և ժամկետը երկարացվում է: Ապրիլի 14-ին տեղի է ունենում բազմամարդ ժողով ՀՀՄՄ, Քննիչ բյուրոյի, վաճառականության, եվրոպական պատգամավորության, Վիրահայ Ազգային խորհրդի, ինչպես և Վրաստանում հայկական դիվանագիտական ներկայացուցիչների մասնակցությամբ: Իր ելույթում Թումանյանը մեղադրել է Հայաստանի կառավարությանը, որը թեպետ ընդունել և կարևորել է Քննիչ բյուրոյի գործը, խոստանալով ֆինանսավորել, բայց խոստումը չի կատարել՝ սլատճառ դառնալով ֆինանսական ճգնաժամի և եթե որոշվի լուծարել հանձնաժողովը, նույնիսկ դրա համար միջոցներ չկան աշխատակիցներին վճարելու: Սկսվում է սուր վիճաբանություն, առաջարկվում է կրկին դիմել Հայաստանի կառավարությանը, բայց Թումանյանը և Համ. Համբարձումյանը դեմ են արտահայտվում: Վեճը շարունակվում է ֆինանսներ հայթայթելու ուղղությամբ. որոշվում է աշխատակիցներին վճարել թեկուզ եղած քիչ միջոցներից, ստանալ անգլիական հրամանատարության թույլտվությունը հիշատակագրի համար դիմել վաճառականության օգնությանը, բայց ի վերջո որոշվում է Քննիչ բյուրոյի գործունեությունն առայժմ դադարեցնել[28]: ՀՀՄՄ կենտրոնական խորհրդի և անձամբ Թումանյանի հույսերը չարդարացան: Թումանյանը բավական ջանք թափեց բյուրոն ֆինանսական ճգնաժամից հանելու, գոնե աշխատակիցներին վճարելու համար: Չնայած ՀՀՄՄ նիստում դեմ էր արտահայտվել Հայաստանի կառավարությանը կրկին դիմելուն, այնուամենայնիվ, տարբեր առիթներով օգտագործում էր իր կապերը, հի-

25 Նույն տեղում, 299:
26 Նույն տեղում, 322:
27 Նույն տեղում, 303:
28 ԹԹ, ՓԲ, №1094:

չեցնելով կառավարական պաշտոնական այրերին օգնել, բայց ապարդյուն: Ասենք նաև, որ 1919 թ. մայիսի 23-ին տպագրվեց հաշվետվություն «Մերձավոր ցուցակ հայ ազգի կրած վնասների գարմանման և հատուցման» վերնագրով և «Կովկասահայության վնասները» ենթավերնագրով, որը ստորագրել են հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը և Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանը[29].

Ինչ վերաբերում է Հայրենակցությունների միության գործունեության ավարտին, այդ մասին արխիվային փաստաթղթերում առայժմ որևէ հիշատակության չենք հանդիպել: Վերջին անգամ միության անունը տրվում է 1920 թ. Թումանյանի՝ Համ. Համբարձումյանին գրած երկտողում: Հայտնելով, որ մի երկու օրով գնում է Կոջոր, հանձնարարում է՝ «եթե բան պատահի, փոխնախագահին գիմեք», ուրեմն, 1920 թ. տակավին գոյություն ուներ ՀՀՄՄ: Բայց նույն թվականի հունվարից Թումանյանը կատարում էր նաև «Հայ որբերի և փախստականների օգնության հայկական կոմիտեի» նախագահի պարտականությունը: Ուրեմն այս անգամ էլ նրա ուսերին երկու նախագահական դժվարին պարտականություն կար և կարծում ենք, որ ՀՀՄՄ գործունեությունը դժվար թե ընթանար նույն թափով, ինչ 1918–1919 թթ., եթե, մանավանդ, նկատի ունենանք չարունակվող տնտեսական ու քաղաքական ճգնաժամը, որը սրվեց հատկապես 1920-ի աշնանը...

Թիֆլիսի հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի և հատկապես Թումանյանի գործունեությունը 1918–1920 թթ. կարևոր տեղ է գրավում հայ ժողովրդի՝ այդ տարիների պատմության մեջ, որը ցավոք, մինչև այժմ չի արժանացել մանրակրկիտ ուսումնասիրության և պատշաճ գնահատականի: Մինչդեռ միությունն իր պարտքն է համարել ստեղծել բոլոր հնարավոր միջոցները, որոնք կարող էին նպաստել հայաբնակ գավառների ինքնապաշտպանությանը, գաղթականության ու որբերի կյանքի բարելավմանը, փախստականների հայրենիք վերադառնալուն: Նման գործերը տնօրինելը դուրս էր որևէ հասարակական կազմակերպության իրավունքներից և հեռու՝ իրականացնելու հնարավորությունից, բայց լավատես Թումանյանն անվարան գործում էր, ձգտում կյանքի կոչել իր դեռ վաղուց ընդունած կարգախոսը՝ գաղափարը առանց գործի դատապարտված է մահվան:

Նման գործունեության մի վկայություն էլ Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Լևոն Եվանդուլյանին ուղղած Թումանյանի նամակն է՝ գրված 1919 թ., ապրիլին (սևագիր, անթվակիր, պակասավոր)[30]*: Պարզվում է, որ 1917–1920 թթ. Թումանյանը իր վրա է վերցրել այնպիսի գործեր, որոնք անկարող էին սկսել և ավարտել Ազգային խորհուրդը, ապա՝ Վիրահայ Ազգային խորհուրդը: Թիֆլիսի Ազգային խորհուրդը, ինչպես ասել ենք, դեռ 1917 թ. աշնանը իրեն հայտարարել էր հայության գերագույն մարմին, բայց, չնայած դրան, դաշնակիցներն ավելի շատ վստահում էին Թումանյանին և նրա ղեկավա-*

29 *«Աշխատավոր», 1919, №102:*
30 *ԵԼԺ, 10, 312, 665:*

ությամբ գործող ՀՀՄՄ-ին: Դաշնակիցների վստահությունը ավելի որոշակի է Ղարաքիլիսայի ճակատամարտի նախօրյակին, երբ նրան առաջարկել են զենք ու ռազմամթերք հայերի ինքնապաշտպանության համար՝ սկսելով այն Լոռուց: Դաշնակիցները նույնիսկ խոստացել են «շատ խոշոր գումար դնել էդ գործի մեջ, նկատելով էդ լեռնաշխարհի ու Ղարաբաղի ուժեղացումը»: Հասկանալի է, որ նրանք այդ խոստումներն անում էին սեփական շահերի, տարածաշրջանում հաստատուն բարձը դիրք գրավելու նպատակով, բայց տվյալ դեպքում կարևորը Թումանյանի հեղինակությունն էր, որը բարձր էին գնահատում նաև օտարները:

Այդ հեղինակության իսկական գնահատականը տվել է ինքը՝ Թումանյանը: Համ. Համբարձումյանն իր հուշերում գրում է. «— Համազասպ,— ասում էր հաճախ Թումանյանը,— մենք երկուսս կարծես պետություն ենք պետության մեջ: Մեր ժողովուրդների հասարակական ու կուլտուրական կյանքին վերաբերող որևէ հարց կա՞ արդյոք, որը մեր իրավասության մեջ չմտնի: Ճիշտ եմ ասում, չկարծես թե կատակ է: Իսկ ի՞նչ բան է պետությունը, եթե ոչ հենց այնպիսի մի ֆունկցիա, որ մշտապես կատարում ենք մենք երկուսս»[31]:

* * *

1919 թվականի փետրվարի 20-ին առանց պետական հովանավորչության ու հրահանգի՝ մամուլը ողողվում է մեծ սիրո, բարձր գնահատանքի խոսքերով. մեծարվում էր Ամենայն հայոց բանաստեղծ Հովհ. Թումանյանը՝ ծննդյան 50-ամյակի առիթով: Հետագա օրերին սկսվում են հանդեսներ, մեծարանքի երեկույթներ և ցերեկույթներ, որոնք կազմակերպում էին դպրոցները, հասարակական կազմակերպությունները մշակութային գործիչների ջանքերով: Անմասն չի մնում նաև Հայրենակցական միությունների միությունը: Փետրվարի 27-ին տեղի է ունենում հրապարակային ընդլայնված նիստ Մարդար Ավետիսյանի նախագահությամբ (այդ ժամանակ միության փոխնախագահը): Հատուկ պատգամավորություն է գնում բանաստեղծին Հայոց բարեգործական ընկերության դահլիճ բերելու համար, ուր մեծ հանդիսավորությամբ նշվում էր հոբելյանը: Ելույթ է ունենում Մ. Ավետիսյանը՝ ըստ արժանվույն գնահատելով Թումանյանի ստեղծագործությունը և հասարակական գործունեությունը:

Դիմելով զեկուցողին և բոլոր ներկաներին Հ. Թումանյանը հայտնում է, «որ ինքը անչափ հուզված է այն իսկապես էական և հայ ժողովրդի համար շատ բնորոշ հանգամանքով, որ նա, բազմաչարչար հայ ժողովուրդը, երբ ահն ու մահն են տիրում նրա հայրենիքում, կարողանում է, այնուամենայնիվ, աչք բաց անել ցավ ու տանջանքից և ոգևորվել կուլտուրական գործերով... Այս բանը լցնում է մեր հոգին կենդանի և անմեռ հոգսերով դեպի մեր ազգի ապագան»:

Իր ելույթում Ստ. Մալխասյանցը առանձնապես գնահատում է Թումանյանի լեզուն, ընդգծելով, որ դրա աղբյուրը հայոց լեզվի հարստությունն է, ճկունությունը, բանաստեղծական լինելը և հայտնում է, թե այդ

31 ԹԺՀ, էջ 700:

արժանիքների ամենափայլուն արտահայտիչը Թումանյանն է: Պատասխանելով Մալխասյանցին, բանաստեղծը «աշխատում է ապացուցել,– գրված է նիստի արձանագրության մեջ,– որ իր արածը, որպես գրական գործ, առանձին մի բան չէ և որ դեռևս հայտնի չէ, թե այս ամենից, ինչ որ ինքը գրել է, ո՞ր մասը կկարողանա դիմանալ ժամանակի աղդեցությանը: Իմ բազմաթիվ գրվածքներից,– շարունակում է բանաստեղծը,– թերևս շատ ու շատ քչերը պետքական լինեն դալիք սերունդներին... իմ բոլոր գրվածքներից գժվար թե մի կամ երկու բան մնան ապագայի համար և արևի հզոր ազդեցության տակ չխունանան»:

Ելույթ են ունենում Համ. Համբարձումյանը, Պ. Աբելյանը, Ս. Աբովյանը կանդ առնելով հոբելյարի ստեղծագործության համամարդկային արժանիքների, բանաստեղծի մարդկային հատկանիշների, ստեղծագործական թռիչքի, հասարակական գործունեության ու մարդասիրության վրա: Պատասխան խոսքում Մեծ բանաստեղծը համեստորեն հրաժարվում է մեծարանքից[32]*:*

Մինչդեռ մեծարանքներն ու անկեղծ բարձր գնահատականները շարունակվում էին ամիսներով, անցնում Թիֆլիսի սահմաններից, հասնում Հայաստանի Հանրապետություն, հայաբնակ գրեթե բոլոր վայրերը: Ամենուրեք կազմակերպվում էին գրական-երաժշտական ցերեկույթներ, հոբելյանական նիստեր, կարգում էին բաղմաբովանդակ զեկուցումներ անվանի մշակութային գործիչների մասնակցությամբ: Ամենուրեք ստեղծագործող Թումանյանի հետ մեծարվում, գնահատվում էր քաղաքացի պոետը իր մեծ գործի անմահությամբ: Այդ անմահության մի կարևոր դրվագը Հայոց հայրենակցական միությունների միության գործունեությունն է, որը և ներկայացվեց ընթերցողին:

ТУМАНЯН И СОЮЗ АРМЯНСКИХ ЗЕМЛЯЧЕСКИХ СОЮЗОВ

ЛУСИК КАРАПЕТЯН

Резюме

Весной 1918 г. в Тифлисе усилиями Туманяна был создан Союз армянских земляческих союзов, целью которого было объединить землячества всех армянонаселенных провинций и совместными силами противодействовать армяно-турецким столкновениям, из-за которых сложилось крайне бедственное положение как для местного армянского населения, так и для беженцев из Западной Армении. Повсюду царили голод, эпидемии болезней, убийства, похище-

32 *Թումանյանի պատասխան ելույթը Համ. Համբարձումյանի գրած արձանագրության մեջ և Մ. Ավետիսյանի հուշերում տարբեր են: Մայիսի 8-ին տեղի է ունեցել բանկետ ի պատիվ բանաստեղծի. պետք է ենթադրել, որ ելույթ ունեցողների համեմատությունները Խորենացու, Նարեկացու, Քուչակի, Սայաթ-Նովայի, Աբովյանի հետ եղել են այդ բանկետի ժամանակ, բայց հուշագիրը չփոթել է հոբելյանական նիստի և բանկետի ելույթները (տե՛ս ԹԺՀ, էջ 185, ԹԹ, ՓԲ, № 358, 374):*

ния. Сплотив вокруг себя представителей интеллигенции армянонаселенных районов (Д. Демирчян, Ам. Амбарцумян, А. Тер-Григорян, Ст. Малхасянц и др.), Туманян делал все возможное и невозможное для сбора пожертвований, для оказания необходимой помощи народу, обращаясь с устными и письменными ходатайствами и призывами к академиям всех стран мира, представителям великих держав, описывая в них крайне бедственное, безысходное положение армянского народа. Он действовал безо всякой поддержки со стороны правительства, делал неимоверные усилия, однако результаты были совершенно неудовлетворительными. В 1918 г. Союз землячеств по инициативе Туманяна организовал также Бюро по установлению потерь армянского народа от всемирной войны, которое также не добилось желаемых результатов, несмотря на все старания Туманяна. Причиной провала было то, что деньги, обещанные правительством Армении, так и не были предоставлены. В то же самое время обострились армяно-грузинские отношения. Началась война, однако благодаря Туманяну кратковременные стычки завершились миром.

TOUMANYAN AND THE UNION OF ARMENIAN NATIONAL UNIONS

LOUSIK KARAPETYAN

S u m m a r y

In the spring of 1918 by the efforts of Toumanyan the Armenian Union of National Unions was established which was aimed to unite all the unions of Armenian provinces and jointly resist the Armenian-Turkish conflicts which created severe conditions fot the local Armenian population and particularly for the refugees of the Western Armenia. There was hunger, epidemics of diseases, wild murders and kidnappings everywhere. Consolidating the representatives of the intellectuals of Armenian provinces (D. Demirchyan, Ham. Hambardzumyan, A. TerGrigoryan, St. Malkhasyants and others) Toumanyan was doing the possible and impossible, i. e. obtaining money, helping the people, making written and oral speeches, applying to all the academies of the world and representatives of the large states describing in them the difficult situation of the Armenian people. He was acting without the governmental assistance, made incredible efforts but the result was very poor. In 1918 by Toumanyan's initiative the Union organized also "The bureau (committee) of counting the losses of Armenian people during the World War" which was also unsuccessful despite Toumanyan's efforts. The reason of the failure was the money which the Government of Armenia had promised to give but did not keep its word. At the same time, a war began between Armenia and Georgia but due to Toumanyan the short but serious conflict ended with peace.